ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փողոց, 7

հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2024 թվականի № 254-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ, ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-009-0030-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Արտակ Բագրատի Ծատուրյանի կողմից ներկայացված դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0030-0005 կադաստրային ծածկագրով հողամասի սահմանային չափերը և մակերեսը ճշտելու, ճշտված մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու խնդրանքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N14082018-06-0047 (տրված՝ 14/08/2018թ.) վկայականը, «Էդուարդ Ապրեսյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով հաստատված 25.09.2024թ. թիվ 2024TXGKTJ ծածկագրով տրամադրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը և 23.10.2024թ. կազմված ինքնակամ կառույցի հաշվառման փաթեթի վերաբերյալ համաձայնությունը, տեղագրական հատակագիծը և եզրակացությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունը կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի՝

**որոշում եմ.**

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0030-0005 կադաստրային ծածկագրի տակ գտնվող Արտակ Բագրատի

Ծատուրյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի սահմանային չափերը և հողամասի մակերեսի չափը՝ 0.26387 հա, համաձայն «Էդուարդ Ապրեսյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծի:

2. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0030-0005 կադաստրային ծածկագրի 0.26387 հա մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել Արտակ Բագրատի Ծատուրյանի սեփականության իրավունքը:
3. Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0030-0005 կադաստրային ծածկագրով, Արտակ Բագրատի Ծատուրյանին սեփականության իրավունքով պատկանող 0.26387 հա մակերեսով հողամասում՝ համաձայն հատակագծի, ինքնակամ կառուցված անասնաշենքը՝ 56.50քմ մակերեսով, ծածկը՝ 11.10քմ մակերեսներով:
4. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 56.50 քմ մակերեսով անասնաշենքի համար՝ 35700 /երեսունհինգ հազար յոթ հարյուր / ՀՀ դրամ, 11.10 քմ մակերեսով ծածկի համար՝ 7050 /յոթ հազար հիսուն/ ՀՀ դրամ: Ընդամենը ենթակա է վճարման 42750 /քառասուներկու հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ:
5. Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար նախատեսված գումարը վճարել համայնքի բյուջեի թիվ 900255001324 հաշվեհամարին:
6. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

**2024թ. նոյեմբերի 20**

**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » նոյեմբերի 2024թ. № 255-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ, ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ 06-044-0301-0034 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. «Կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին» թիվ 698-Ն որոշմամբ, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, հիմք ընդունելով Վարսենիկ Ռաֆիկի Մշեցյանի կողմից ներկայացված դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի 06-044-0301-0034 կադաստրային ծածկագրով հողամասի սահմանային չափերը և մակերեսը ճշտելու, 02.04.2024թ. տրված թիվ 1020 (ժառանգական գործ թիվ 66/2024թ.) գրանցամատյանով հաստատված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Օլյա Տրանդաֆիլովա» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը՝

**ո ր ո շ ու մ ե մ**

1. Ճշտել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի համաձայն 28.02.2003թ. տրված թիվ 1658297 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի, պետական գրանցում ստացած 06-044-0301-0034 կադաստրային ծածկագրի տակ գտնվող Վարսենիկ Ռաֆիկի Մշեցյանին և Մերի Միսակի Ասոյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասի սահմանային չափերը և հողամասի մակերեսի չափը՝ 0.6200 հա, համաձայն «Օլյա Տրանդաֆիլովա»

«Օյա Տրանդաֆիլովա» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:

2. Հաստատել հողամասի սահմանները համաձայն «Օյա Տրանդաֆիլովա» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի 06-044-0301-0034 կադաստրային ծածկագրի 0.6200 հա մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել Վարսենիկ Ռաֆիկի Մշեցյանի և Մերի Միսակի Ասոյանի սեփականության իրավունքը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ

**2024թ. նոյեմբեր 20**
**գ. Լոռի Բերդ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Լոռու մարզ, Լոռի բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փողոց, 7

հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 նոյեմբերի 2024 թվականի N 256-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Զինա Իվանի Ամիրյանի կողմից ներկայացված դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N02102014-06-0026 (տրված՝ 02/10/2014թ.) վկայականը, «Սամվել Ֆրանգյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով հաստատված 17.11.2024թ. թիվ 2024TANVXQ ծածկագրով տրամադրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը և 03.11.2024թ. կազմված ինքնակամ կառույցի հաշվառման փաթեթի վերաբերյալ համաձայնությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

**որոշում եմ.**

1. Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Յաղդան բնակավայրում գտնվող Զինա Իվանի Ամիրյանին սեփականության իրավունքով պատկանող 06-079-0016-0004 ծածկագրի տակ գտնվող 0.1049 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 17.79քմ մակերեսով անասնաշենքը, 21.78քմ մակերեսով ծածկը:
2. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 17.79քմ մակերեսով անասնաշենքի համար՝ 11250 /տասնմեկ հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ, 21.78քմ մակերեսով ծածկի համար՝ 13750 /տասներեք հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ: Ընդամենը ենթակա է վճարման 25000 /քսանհինգ հազար / ՀՀ դրամ:

3. Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար նախատեսված գումարը վճարել համայնքի բյուջեի թիվ 900255001324 հաշվեհամարին:

4. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

**2024թ. նոյեմբերի 20**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լոռի Բերդ, (0256) 2-14-75, loriberdhamaynq2017@mail.ru


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » նոյեմբերի 2024 թվականի N 257-Ա

## «ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 01-Ի ԹԻՎ 230-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ ենթակետերով

**որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2024թ. նոյեմբերի 01-ի թիվ 230-Ա որոշման առաջին պարբերության 9-րդ տողում գրառված՝ «Կնազյանի» բառը փոխարինել՝ «Կնյազյանի» բառով:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2024թ. նոյեմբերի 01-ի թիվ 230-Ա որոշման 1-ին կետում «Կնազյանին» բառը փոխարինել՝ «Կնյազյանին» բառով:
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2024թ. նոյեմբերի 01-ի թիվ 230-Ա որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Հողամասի կադաստրային արժեքի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը կազմում է՝ 2.799.944 /երկու միլիոն յոթ հարյուր իննսունինը հազար ինը հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ, 60-օրյա ժամկետում անհրաժեշտ է վճարել համայնքապետարանի 900255114135 հաշվեհամարին»:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 20
գ.Լոռի Բերդ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լոռի Բերդ, (0256) 2-14-75, loriberdhamaynq2017@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » նոյեմբերի 2024 թվականի N 258-Ա

**«ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 01-Ի ԹԻՎ 231-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ ենթակետերով

**որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2024թ. նոյեմբերի 01-ի թիվ 231-Ա որոշման առաջին պարբերության 8-րդ տողում գրառված՝ «Կնազյանի» բառը փոխարինել՝ «Կնյազյանի» բառով:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2024թ. նոյեմբերի 01-ի թիվ 231-Ա որոշման 1-ին կետում «Կնազյանիին» բառը փոխարինել՝ «Կնյազյանին» բառով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

**2024թ. նոյեմբերի 20**
**գ.Լոռի Բերդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » նոյեմբերի 2024թ. № 259-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ կետերի և ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի անագանու 27.12.2023թ. թիվ 84-Ն որոշման 5-րդ մասի 2-րդ կետի՝

**որոշում եմ.**

1. Լոռի Բերդ համայնքի 2024թ. բյուջեի 01-01-01դասակարգմամբ«կառավարման ապարատ» նախահաշվում կատարել հետևյալ փոփոխությունները.
1.1. 4111 հոդվածով սահմանված գումարից պակասեցնել 4.600.000 (չորս միլիոն վեց հարյուր հազար) դրամ՝ այն սահմանելով 89.703.600 (ութսունինը միլիոն յոթ հարյուր երեք հազար վեց հարյուր) դրամ:
1.2. 5122 հոդվածում ավելացնել 1.000.000 (մեկ միլիոն) դրամ՝ այն սահմանելով 7.000.000 (յոթ միլիոն) դրամ:
1.3. 5129 հոդվածում ավելացնել 380.000 դրամ՝ այն սահմանելով 380.000 (երեք հարյուր ութսուն հազար) դրամ:
2. Լոռի Բերդ համայնքի 2024թ. բյուջեի 01-06-01դասակարգմամբ«ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» նախահաշվում կատարել հետևյալ փոփոխությունը.
2.1. 4267 հոդվածում ավելացնել 1.600.000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) դրամ՝ այն սահմանելով 2.000.000 (երկու միլիոն) դրամ:
2.2. 5121 հոդվածով սահմանված գումարից պակասեցնել 1.380,000 (մեկ միլիոն երեք հարյուր ութսուն հազար) դրամ՝ այն սահմանելով 33.270.000 (երեսուներեք միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար) դրամ:
3. Լոռի Բերդ համայնքի 2024թ. բյուջեի 06-04-01դասակարգմամբ«փողոցների լուսավորում» նախահաշվում կատարել հետևյալ փոփոխությունը.
4269 հոդվածում ավելացնել 3.000.000 (երեք միլիոն) դրամ՝ այն սահմանելով 3.000.000 (երեք միլիոն) դրամ:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

2024թ. նոյեմբերի 20
գ. Լոռի Բերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ. loriberd.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

« 25 » նոյեմբերի 2024թ. № 260-Ա

**ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Կողես գյուղի 06-056-0023-0012 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Կողես, 5-րդ փողոց, 11 հողամաս փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

կատ.՝ Ս. Վարդումյան
հեռ.՝ 098-12-25-92

**2024թ. նոյեմբեր 25**
**գ. Լոռի Բերդ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ. loriberd.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» նոյեմբերի 2024թ. № 261-Ա

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ 06-044-0019-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 2 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ 1.95310 ՀԱ ԵՎ 0.04690 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «ԿԱՐԵՆ ԱԴԱՄՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված բաժանման հատակագիծը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հաստատել Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի 06-044-0019-0001 կադաստրային ծածկագրով հողամասի բաժանումից առաջացած 1.95310 հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթ փողոց, թիվ 59 հողամաս փոստային հասցեն:
2. Հաստատել Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի 06-044-0019-0001 կադաստրային ծածկագրով հողամասի բաժանումից առաջացած 0.04690 հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթ փողոց, թիվ 53/2 հողամաս փոստային հասցեն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

կատ.՝ Մ. Վարդումյան
հեռ.՝ 098-12-25-92
2024թ. **նոյեմբերի 26**
**գ. Լոռի Բերդ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լոռի Բերդ, (0256) 2-14-75, loriberdhamaynq2017@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 27 » նոյեմբերի 2024 թվականի N 262-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 257-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ հոդվածի 3-րդ ենթակետերով՝

**որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2024թ. նոյեմբերի 20-ի թիվ 257-Ա որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.
«Հողամասի կադաստրային արժեքի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը կազմում է՝ 1.471.555 /մեկ միլիոն չորս յոթանասունմեկ հազար հինգ հարյուր հիսունհինգ/ ՀՀ դրամ, 60-օրյա ժամկետում անհրաժեշտ է վճարել համայնքապետարանի 900255114135 հաշվեհամարին»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

**2024թ. նոյեմբերի 27**
**գ.Լոռի Բերդ**